Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
փետրվարի 2-ի նիստի N 4
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ԿԱԴԱՍՏՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՆԵՐԴՐՄԱՆ,ՎԱՐՄԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

N N ը/կ	Միջոցառման անվանումը	Նպատակը	Խնդիրը	Պատասխանատուն	Համակատարողը	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը	Ակնկալվող ֆինանսական միջոցները	Վերստուգելի չափանիշը
1.	Հուշարձանների վերաբերյալ կադաստրային տվյալների ձեռքբերում, կադաստրի կազմում և վարում	Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերաբերյալ կադաստրային գրանցամատյանի ստեղծման, տվյալների ձեռքբերման, համակարգման, ներմուծման և դրանց տրամադրման մատչելիության ապահովումը	Հուշարձանների հաշվառման փաստաթղթերի (վկայագիր, պահպանական գոտի, ներդիրներ, ցուցակներ) լրամշակման և ճշգրտման անհրաժեշտությունը, արդի տեխնոլոգիաների զարգացման, մասնավորապես, քարտե-	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2017 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ	Հայաստանի Հանրապետության պետական կադաստրային համակարգին միացում և միասնական տեղեկատվության ապահովում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գրանցամատյանում դրանց կադաստրային տվյալների գրանցում

			զագրական նյութերի թվային համակարգին անցնելը, ինչպես նաև պետական կադաստրի բնագավառում կիրառվող ձևաչափերին համապատասխանեցնելը						
2.	Մշտական գործող աշխատանքային միավորի ստեղծում	ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքների պետական հաշվառման աշխատանքների արդյունավետության բարձրացման ապահովումը	Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռներում պատմական և մշակութային հողերին վերաբերող տվյալների անճշտությունները, տեղեկատվական բազաներում հուշարձանների սեփականատերերի (վարձակալների, օգտագործող-	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2017 թվականի օգոստոսի 1-ին տասնօրյակ	Հուշարձանների կադաստրի վարման նպատակների և խնդիրների լուծում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ համայնքների տարածքներում կադաստրային տվյալների ձեռքբերման խումբ

			ների) վերաբերյալ տվյալների բացակայությունը						
3.	Համապատասխան համակարգչային ծրագրի (ArGIS) ձեռքբերում	Ներդնել բնագավառում առկա խնդիրների համապարփակ լուծման մեխանիզմներ	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրի ներդրման, ընդլայնման և տեխնիկական ապահովման ծրագրի բացակայությունը	ՀՀ մշակույթի նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2017 թվականի սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	համապատասխան սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով և ծրագրերով համալրում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	հուշարձանին վերաբերող նյութերի հավաքագրում, մշակում, մուտքագրում, տեղեկատվական բազայի ստեղծում
4.	Հուշարձանների (գույքի) նկատմամբ իրավունքի պետական գրանցում և վկայականների ձեռքբերում	ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների լիարժեք և ամբողջական գործընթացների կազմակերպման և վերահսկողության կատարելագործում	Պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների և դրանց տարածքների սեփականության իրավունքի գրանցման գործընթացի բացակայությունը	ՀՀ մշակույթի նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2018 թվական մարտի 1-ին տասնօրյակ, շարունակական	Հուշարձանների (գույքի) նկատմամբ իրավունքի պետական գրանցումը և վկայականների ապահովում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	Հուշարձանների (գույքի) նկատմամբ իրավունքի պետական գրանցումը և վկայականների առկայություն